Բ Ա Ղ Ե Շ

60. ՆԱՐԴԱՆՈՍ

Ժամանակին մի թաքավոր կէղնի, կունենա իրեք տղա, մեկ ախչիկ։ Թաքավոր արդեն ըխթիյարցեր էր, կանչեց տղեկներուն, ըսաց.— Տղեկներ, ես ըխթիյարցեր եմ, ծեղի թանրահ կէնեմ, հ'ըմեն սարով քնացեք, էս մեկ Սև սարով չէրթաք։ Իմ թանրեհն էտ է։

Մնաց մեկ ամիս, թաքավոր մեռավ։ Մեծ տղեն ասաց.— Իմ խեր, «Սև սարով, ասաց, մի՛ էրթաք», ես էսօր կէրթամ։

Ախպրտիք ասացին.— Մի՛ էրթար։

Պայց հ'ելավ քնաց։ Առավ նետ ու անեղ, ճամբա ընդավ։ Շատ քնաց, քիչ քնաց, էտ Սև սարի քլուխն հ'ելավ։ Տեսավ դուզ տեղմ'էր։ Մե քիչ քնաց, տեսավ հեռվեն թոզ-դուման կելնե։ Ասաց՝ «էս թոզ ու դուման ի՞նչ է. չեմ քիտեր. ինք պստիկ է, թոզ-դուման շատ է, էրթամ տեսնինք ի՞նչ է»։

Քնաց մի քիչ, տեսավ օր պստիկ շուն մի։ Ասաց՝ «էս շան տեր կա, էրթամ քտնիմ, կամ թե շան սպանիմ»։

Նետ անեղ վերցեց շան զարկեց, շան չառավ։ Շուն փախավ, ինքն հ'ետևեն։ Շատ քնացին, քիչ քնացին, ճոչ մաղարեմ՝ տեսան, դև մի մեջ նստած։

Դևն ասաց.— Պարո՞վ, հազա՞ր պարով, խողածին. խավքն ուր թևով, օցն ուր պոռտու! էստեխ խողածին չէկեր էր, դուն ինչպե՞ս էկար։ Աստված կիտեր օր ես էս մեկ շապաթ հիվանդ էի, ավշութենի չքընացեր ի, քեղի ճամբեց ընձի ավ։

Ասաց խողածին.— Դորո՞վ է, թե՞ զոռով։

Դևն ասաց.— Դորով է, առաջ տու զար։

Խողածին նետ անեղ վերցեց, զարկեց դևուն, դրրբ[1] չպռնեց։

Դևն ասաց.— Հիմա դոր էկավ իմ։

Խողածին ասաց.— Դուն ալ զարկ քու դրրբ։

Դևն ասաց.— Դուն դրրբի բան չես։ Քեզի մեկ պրտուճ կէ-նեմ։— էն սհաթին քլուխ կտրեց, կախեց քյամարը, խողածնի ջան-դակ քիչ տաքցուց, քաշեց փոր։

Տառնանք մենք էրկու ախպոր, քուրոջ վրա։

Էրկու ախպեր, քուր տեսան օր իրենց ախպորից ջյուաբ չկա. էրկու ամիս սպասեցին, նորեն ջյուաբ չառան։

Միճնեկ ախպեր ասաց.— Ես կէրթամ իմ ախպոր հավար։

Ախպերն ու քուր ասին թե.— էն ախպեր մեր հոր օսյաթ չը-պըռնեց, քնաց ու կորավ։ Արի՛, մի՛ էրթար դուն ալ կորիր։

Ճոջի խոսք ով օր չպռնե, հ'մեն անքամ քլուխ քարին կառնի։

Վերճապես, շատ ասին, տղի վրա չէղավ։ Առավ նետ անեղ՝ ճամբա հ'ելավ։ Շատ քնաց, քիչ քնաց, էտ Սև սարի քլուխն հ'ելավ։ Տեսավ զատունց թող ու գումանը կուքա։

Տղեն ասաց՝ «Կա ու չկա՝ իմ ախպոր քլուխ ուտող էս մարթն է»։

Քնաց մե քիչ, մեկ մեկի մոտեցան, տեսավ օր պստիկ շու՝ մի։

Տղեն ասաց՝ «Հաստատ օր իմ ախպոր քլուխ ուտող էս է»։ Հա-նեց նետ անեղ զարկեց շան։ Շան՝ դրրբ չպռնեց։ Շուն փախավ, տղեն հ'ետևեն։

Շատ քնացին, քիչ քնացին, տեսավ օր շուն մտավ մուղարեն։ Քնաց մուղարի տուռ, տեսավ դև մի նստուկ էնտեղ։

Դևն ասաց.—Պարո՞վ, հազա՞ր պարով, խողածին. խավքն ուր թևով, օցն ուր պոռտով էստեղ խողածին չէկեր էր։ Աստված գիտեր, էս էրկու ամիս ավջութենի չգնացեր ի, քեզի ճամբեց ընձի ավ։

Տղեն ուր հեռսեն քլուխ պանցրցուց, տեսավ օր ուր ախպոր քլուխ քյամարից կախված էր։

Տղեն ասաց.— Դորո՞վ ա, չէ՞ զոռով։

Դևն ասաց.— Դորով ա, խողածին, զա՛ր քու դրրբ։

Տղեն նետ անեղ ծեռք առավ, զարկեց դևուն, դրրբ չպռնեց։

Դևն ասաց.— Խողածին, դորն էկավ ընձի։

Տղեն ասաց.—Զա՛ր, քու դրրբ։

---

1 Հարված (Ս. Բ.)։

Դևն ասաց.— Խողա՛ծին, դրրբի տեղ չունիս։ Քեզի մեկ պրտուճ կէնիմ։ Էն սհաթին տղի քլուխ կտրեց, կախեց քյամարեն։ Ջանդակ քիչ տաքցուց, քաշեց փոր։

Մենք տառնանք ախպոր, քուրոջ վրա։

Ախպեր քուրոջ ասաց.— Քուրի՛կ, մեր էրկու ախպերն էլ քնացին, էս էղավ իրեք ամիս ջյուաբմ՝ չկա։ Ի՞նչ էղավ։

Քուրն ասաց.—Ես ասի ուրանց, օր մեր խեր թանբահ էրեր, էնոր թամբեն մի՛ կորցուցեք։

Մնացին մի քանի շապաթ, պստիկ ախպեր ասաց.— Քուրի՛կ, ես էսօր պիտի էրթամ։ Իմ էրկու ախպեր մեռան, ե՞ս ինչի կմնամ։ Ես էլ կէրթամ էնոնց պես կմեռնիմ։

Քուրն ասաց.— Արի՛, մի՛ էրթար։ Էնոնք ըրեցին, դուն մի՛ էներ։

Շատ համոզեց ախպոր վրա՝ չէղավ։ Ախպեր նետ անեղ ծեռք առավ, քուրոջ ասաց.—Մնաս պարով, ես կէրթամ, կամ իմ ախպոր պես կմեռնիմ, կամ թե էնոնց հայիֆ կառնիմ, իսկ դու քուրիկ, մի՛ մտածի, քանի օր էղեր է։ Կէրթամ, սաղ մնացի՝ քեզի կքտնիմ։

Տղեն ճամբա ընկավ։ Շատ քնաց, քիչ քնաց, էտ Սև սարի գըլուխն հ'ելավ։ Տղեն տեսավ օր հեռվեն մեկ թոզ ու դուման մի կուքա։ Տղեն ասաց՝ «էս թոզ ու դուման էրող քաջ մարթու կնմանի, պայց խոք չէ»։ Նետ անեղ լավ մի սրեց, ճամբա ընկավ։ Շատ քընաց, քիչ քնաց, տեսավ օր էտ թոզ ու դուման էրող պստիկ շու՝ մա։ Տղեն ասաց ինքն իրեն՝ «Ես դիտի քաշ մեկ մարթմ՝ էր։ Տեսնիմ օր շուն ա։ Իմ ախպոր քլխներ ուտող կա ու չկա էս շուն ա։ Կայնիր՝ ես ըսպանեմ»։

Նետ անեղ ծեռքին պռնեց, զարկեց, շուն էղավ էրկու կտոր։ Դև տեսավ օր ուր շուն ըսպանեցին, ասաց՝ «Հիմի իմ քլուխն էլ կզանի»։

Տղեն ճամբա ընգավ։ Քնաց տեսավ օր դև մի նստուկ է մուղարի հ'առճև։

Դևն ասաց.— Պարո՞վ, հազա՞ր պարով, խողածին, խավքն ուր թևով, օցն ուր պոռտով էստեղ խողածին չէկեր էր։

Տղեն ասաց.— Դորո՞վ է, չէ՞ զոռով։

Դևն ասաց.— Դորով է, խողածին, զա՛ր քու դրրբ։

Տղեն նետ անեղ ծեռք առավ, քլուխ պարցրցուց տեսավ էրկու ախպոր քլուխ տեղ կախուկ էր։

Տղեն ասաց՝ «Ցա խացն ու գինին, տեր կենթանին», նետ անեղ զարկեց։

Դևն ասաց.— Կտրի՛ճ, մեկ դըրբ էլ զար։

Ասաց.— Կտրճի դըրբ մեկ է, էրկուս չէղնիր։

Քիչ մնաց դև սատկավ։ Պերեց քառսուն դյազնոց խոր փորեց, դևու ջանդակ կիմի պես մանդրտեց, լեցուց խոր։ Մուղարի հ՝առճև ճոշ քարմ՝ կար, էն էլ պերեց թալեց խորու վրա։ Քնաց մտավ ներս։ Տեսավ չորս հ՝օդա, մեկի մեջ օսկի, էն մեկելի մեջ առծաթ, էն մեկել՝ անքին ակ, իսկ էմեկել հ՝օդեն լիք ապրշումեղեն։ Տղեն ինքն իրեն ասաց՝ «Աստված ընձի էտուր»։ Եթե էսոնց ընդեր իմանա գա ընձի հաղթե, չեմ գիտեր, թե չէ կմնամ, իմ քուրն էլ որտեղեն էղեր կամ կուքա, կամ ես կպերեմ։

Մութ էղավ, տղեն հ՝նլավ պառդավ։ Պարի լուս օր պացվավ հազըրներուն՝ տղեն հ՝ելավ, տոներ փակեց, նետ անեղ առավ ծեռք, կնաց ավջութենի։

Իրիկուն էղավ, քանիմ՝ խատ խավք զարկնց պերեց տուն, կրակ էրաց, քյաբաբ շինեց, կերավ։ Ժամանակմ՝ էտպես անցուց։

Մենք տառնանք քուրոջ վրա։

Քուր տեսավ օր իրեք ախպերն էլ քնացին, իրեքից մեկ խաբար չառավ։

Քուրն ասաց՝ «Իմ իրեք ախպեր էրթլուց սորա մնացեր եմ ի՞նչ կէնեմ, ես էլ կելիմ կէրթամ»։

Շորեր խուքավ, տուռ փակեց, ճամփա ընգավ։ Շատ քնաց, քիչ քնաց, մութ կիջեր էղավ, էտ սարի քլուխն հ՝ելավ։ Ախչիկն ասաց՝ «Կա ու չկա էս թարաֆներ կամ տուն, կամ տեղ մի պիտի էղնի, օր ես մնամ, մինչև լուսնա, օր էրթամ ախպերս գտնիմ»։

Պայց մութը էղնելու խամար ախչիկ վախեցավ, սկսավ բոռալ ու ճվալ։

Տղեն ուր հ՝օդի մեջ լսեց քեշ ձեն մի, ասաց՝ «Կա ու չկա, էս դևի ընգերտիքն են, լսեցին, էկան օր ընձի ուտեն, կայնիր, ես առնիմ նետ անեղ, կայնիմ տուռ, գալուն պես դըրբ մի կզարնիմ, կամ պռնե, կամ չպռնե, էտ էլ իմ բախտ»։

Տղեն առավ նետ ու անեղ, լավ սաղեց, կայնավ տուռ։ Տեսավ օր բոռուն ու ճչուն էրթլով կշատնա։ Ախչիկ ուր վախեն էլ ձեն չի կտրեր, կզարնի քլխուն, կբոռա՝ «Ամա՜ն ախպեր, ամա՜ն ախպեր»։

Ախչիկ մոտեցավ մուղարին, պայց մութն է։ Տղեն էնչափ խասկցավ, օր կըսեր՝ «Ամա՜ն ախպեր, ամա՜ն ախպեր»։

Տղեն ասաց՝ «Էստեղ կիշերով խողածին ի՞նչ պան ունի։ Կա ու չկա դևի ընգերտիքն են»։

Ախչիկ մոտեցավ մուղարին։ Տղեն էրաց օր քուրոջ զարներ, մեկ էլ մտածեց թե՝ «էս բոյ դև չկա, կեցիր տեսնիմ ի՞նչ է»։

Մոտեցան մեկ մեկի տեսավ օր իրեն քուր։

Տղեն ասաց.— Քուրի՛կ, ինչի՞ ձեն չէիր խաներ, քիչ մնաց, օր քեզի զարնեի։

Ախչիկն ասաց.— Երանի թե զարնեիր։

Տղեն ասաց.— Քուրի՛կ, արի ներս, քեզի պատմեմ։ Մառախ մի՛ էներ, իմ ախպրտիկաց էրկու քլուխ էստեղն ա, պահեր եմ, պայց էնոր զարկողն էլ ըսպաներ եմ։ Կտեսնիս օր էստեղաց զանգնութեն մեր տնից շատ ա։ Նստինք էստեղ, ուտենք, խմենք, տեսնինք աստված ի՞նչ կէնե։

Տղեն էլ հ՝ըմեն պան չպատմեց քուրոջ։ Հ՝ելան քնան։ Առավոտ էղավ, տղեն ասաց.— Քո՛ւրիկ, չվախենաս, ես կէրթամ ավշութենի, էստեղրանք մարթ ըսված չկա՛, վախեն էլ չեն գար, անխոք էգիր։

Տղեն հ՝ելավ քնաց։ Մե քանի հատ ճնճղուկ, կաքավ զարկեց, ասաց՝ «Հերիք է, էրթամ, քուրս չվախենա»։ Տղեն էկավ տուն, ասաց.— Քո՛ւրիկ, առ էս խավքեր քյաբաբ էրա, պիր ուտենք։

Ախչիկն առավ, քյաբաբ շինեց, պերեցին կերան։ Էտպեսով մի ժամանակ անցուցին։ Մեկ օր տղեն մտածեց, ասաց՝ «Ես իմ քուրոջ թամբահ չէրի, թե էտ քարի վրա ո՛չ ճուր, ո՛չ ախփ և ո՛չ խացի փշուր թափես, եթե թափես՝ դև կսաղնա։ Բալքի էն չգիտեր, մեկ օր ախփ լցե, մեկ օր ճուր, մեկ օր խացի փշուր, կամաց-կամաց դև կսաղնա, էրկուքիս էլ կուտե, ապա, ավելի աղեկ ա, էսօր քուրոջս ասեմ»։

Տղեն ասաց.— Քո՛ւրիկ, էս քարին վրա ո՛չ ճուր, ո՛չ խացի փշուր, ո՛չ ախփ լցես, եթե լցես, մեր ախպոր ուտող դև կսաղնա, կելնի մեզի կուտա։

Քուրն ասաց.— Օր էտպես էր ինչի՞ ընձի առաճուց չասիր, էրկու անգամ ճուր լցեր եմ։

Տղեն ասաց.— Էսկից վերճ մի՛ լցեր, եթե ընձի կլսես։

Քուրն ասաց.— Շատ լավ։

Էտպես էլ մնաց։ Մնաց մի ժամանակ, քուրն ասաց. «Իմ ախպրրտիք իմ խոր թամբեն կոտրեցին, կայնիր ես էլ իմ ախպոր թամբեն կոտրեմ»։

Ախչիկ սկսավ օր օրի վրա ճուր, խաց, ախփ լցեց էտ քարի վրա։ Քանիմ՝ օրեն վերճ քար քիչ մի պանցրցավ։ Ախչիկն ասաց՝ «Իմ ախպոր խոսք շիտակ էր»։ Պայց նորեն մտիկ չէրաց, միշտ խաց ու ճուր կլցա քարի վրա։

Մեկ օր էլ տեսավ օր քար գլորավ մեկ կողմ, դև սաղցավ դուրս հ'ելավ։ Ախչիկ վախեցավ։

Դևն ասաց.— Ա'խչի, մի' վախենար, ես քեզի, դուն ընձի։

Բախտ տվին մեկ մեկի, օր պան չէնեն, մեկ մեկի չսպանեն։ Միշտ ցերեկ դև կուքա ախչկե քով իրիկ կնկա պես, իրիկուն օր էղնի կէրթա մտի խոր, քար կշրջե վրա։

Մի ժամանակ էտպես անցուցին, եվ օր ինն ամիս էղավ, ախչրկե փոր ճոճըցավ։

Տղեն ասաց.— Քուրիկ, ես կիտեմ օր խավքն ուր թևով, օցն ուր պոռտով էստեղրանք մարթ չի գար, քեզի ո՞րն ա մոտեցեր, ընձի ասա'։

Ախչիկն ասաց.— Ախպեր ջան, քեզնե պայեմ, աստծուց ի՞նչ պայեմ, քանի ամիս հ'առեա հ'օդեն էր կավիլի, կետին նռան մի խատ տեսա։ Ես էլ ափսոսացի, կերա, չթալեցի, կարելի է էտորից է։

Տղեն հավատաց.— Շատ կարելի յա, աստված զիտեր օր մենո էրկուքս մինակ էս ահագին տաշտի մեջ կապրինք, կարելի յա աստծու կողմանե մեզի զավակ մի կէղի, օր մենք ուրախնանք։

Մնաց ինն ամիս, ինն օր, ին սհաթ, ին դաղոկա, էղավ մեկ տղա։ Ախպեր տեսավ, շատ ուրախցավ։

Մեկ ժամանակ մնաց, տղեն ասաց.— Քո'ւրիկ, քանի օր տուն կասես էս պան նռնեն էղավ, ուրեմն տղի անուն տնենք Նարդանոս։

Նարդանոս էրթալով կմեծնար, ինչու օր դևու սերմն էր։ Պայց քեռին չէր գիտեր։ Ու շատ կսիրեր։

Մեկ օր դև հ'ելավ, էկավ ախչկե մոտ։ Նարդանոս զինք դրեր սուտ քուն։

Ախչիկն ասաց.— Խերիք չէ՞ գողութենով գաս իմ մոտ ու էրթաս։

Դևն ասաց.— Ի՞նչ էնիմ։

Ախչիկն ասաց.— Արի', ախպերս ըսպանե, առ ընձի, նստի, եթե չէ, ես էսպես գողութենով պան չեմ հ'ուզեր։

Դևն ասաց.— Օր էտպես ա, իրիկուն քու ախպոր մոտեն խարցուր, թե կեսօր օր կէղնի խաց ու ճուր ո՞րտեղ կուտա, խմա։ Էնի քեզի կպատմա, դուն էլ ընձի ասա, ես կէղնիմ վիշապի պես, կէրթամ, կղանիմ, կսպանիմ։

Նարդանոս լսեց, պայց ձեն չեխան։ Դև քնաց իր տեղ։

Իրիկուն էղավ։ Տղեն էկավ տուն։ Քուրն ասաց.— Ախպեր, դուն օր էս սարեր կէրթաս, հաց ուտելու ատեն ճուր կա՞ օր խմես։

Տղեն ասաց.— Քո՛ւրիկ, ես էնպես տեղ մի շիներ եմ, օր մեկ կողմեն ճուր, ճրի վերեն էլ իմ քնելու տեղ։

Ախչիկ ասաց.— Շատ լավ է։

Հաց կերան, հ՚ելան պառկան։ Պարի լուս պացվավ հազրնեբուն, տղեն պիտի էրթա սար։

Նարդանոս ասաց.— Քեռի ջան, հ՚եսօր ես կուդամ քու խետ։

Քեռին ասաց.— Դուն պստիկ ես, էտ սարեր չըս կանար գար։

Նարդանոս[1] ասաց.— Կամ ընձի կմորթես, կամ թե քու խետ կտանիս։

Քեռին Նարդանոս շատ կսիրեր։ Էտոր սիրու խամար առավ տղեն քնաց։

Երբ ճամբեն հ՚ելան, քեռին ուշիկ-ուշիկ կքելեր։ Նարդանոս ասաց.— Քեռի, եթե հ՚ըմեն օր էտպես ուշիկ-ուշիկ էրթաս, էլ ավին չեր խասնիր։

Քեռին ասաց.— Նարդանոս ջան, ես քեզի խամար ուշիկ կէրթամ, օր չխամնաս։

Նարդանոս ասաց.— Օր էտպես ա, ես կէրթամ՝ դու արի իմ հ՚ետևեն։

Նարդանոս քնաց, քեռին չկարցավ էտոր խասներ։ Կանչեց.— Նարդանո՛ս, ուշիկ քնա, ոչ դու խամնաս, ոչ ես։

Էտպեսով քնացին։ Ավ զարկեցին, մեկ մեկու վրա ուրախացան, կեսօր էղավ։ Քեռին ասաց.— Նարդանոս ջան, անոթի չե՞ս, էրթանք հաց ուտենք։

Նարդանոս ասաց.— Էրթանք։

Քեռին առավ Նարդանոս, գնաց ախպրի վրա։ Նստան, խաց կերան, քիչ խոսացին, քեռին ասաց.—Նարդանոս ջան, քիչ մուղյաթ էղիր, ես քնիմ։

Նարդանոս ասաց.— Քեռի, նետ անեղ սազա՛, տուր ընձի, քընիր, բալքի ավ կամ ջանավար կուգա մեր վրա, ես էլ զարնեմ։

Քեռին ասաց.— Դու նետ անեղ ի՞նչ գիտես զարնել։

Ասաց.— Տուր իմ նշանց, քնիր։

Քեռին խաթրեն չ՚ելավ, նետ անեղ զարնել տղին սովրցուց, լավ սազեց՝ տվեց տղին։ Քեռին քնավ։ Մե քիչ մնաց, Նարդանոս տեսավ օր էրկնուց էրեսեն վիշապի պես բա՛ մի կբոռա, կճչա ու կուքա։ Նարդանոս օտքի հ՚ելավ, նետ անեղ ծեռք պռնեց, վիշապ էկավ,

---

1 Բնագրում՝ Դարդանոս, հավանաբար սխալվել է ռանահավաքը (Ծ. Կ.)։

մոտեցավ, էրաց օր քեռուն զարներ, պայց Նարդանոս էն սահաթին նետ անեղ զարկեց վիշապի թևին, յարալի էղավ ու փախավ։

Քեռին հ'արթավ.— Նարդանոս ջան,— ասաց,— ի՞նչ ձեն էր։ Էս ի՞նչ արուն ա։

Նարդանոս ասաց.— Քեռի, մեծ խավք մի էկավ, ես էլ զարկեցի, դըրբ լավ չպռնեց, յարալի էղավ ու փախավ։

Քեռին ծծղաց, ասաց.— Ես չե՞մ գիտեր օր դուն նետ անեղ չես գիտեր բանցուցել։

Նարդանոս ասաց.— Քիչ քիչ կսովրիմ։

Մենք տառնանք դևի վրա։ Դև յարալի էղավ, կնգան պատմեց, թե քու փուճ տղեն չեթող օր զարնեի։ Թե քու ախպեր պառկուկ էր, պայց քու տղեն նետ անեղ ծեռ կայնուկ էր, ես օր քնացի, էրի օր զարնե քեռուն, տղեն ինձմե շուտ զարկեց, էրաց ընձի յարալու։

Իրիկուն էղավ, դև կնաց իրեն տեղ, քիչ մնաց՝ քեռին ու Նարդանոս էկան։ Իրիկուն կերան ու խմեցին, հ'ելան ու պառկան։ Առավոտ էղավ, քեռին հ'ելավ քնաց։ Մի քիչ վերճ, Նարդանոս հ'ելավ, հաց կերավ ու պառկավ, պայց հ'իշար[1] է։ Դևն էկավ, մտավ ներս։

Ախչիկն ասաց.— Տեսա՞ր օր քու ծեռքեն պա՝ մի չելավ։

Ըսաց.— Ի՞նչ էնեմ, քու փուճ տղեն չեթո՛ղ։

Ախչիկն ասաց.— Քու ծեռքեն պան չելնիր։ Արի էս տռան հ'առճև քառսուն գյազնոց խոր փորենք, խսիլմ վրա դնենք, քիչ հող ցանենք վրեն։ Եփ օր կուքա տուն մտնի, կընգնի խոր։

Դևն ասաց.— Էտ էլ լավ պան ա։

Սկսան փորել։ Նարդանոս հասկցավ, քեռու գալու ատեն, հ'ելա՛վ քնաց դուս, քիչ քնաց, քեռին էկավ։

— Քեռի,— ասաց,— ընձի շալկե։

Քեռին ասաց.— Արի շալկեմ։

Քիչ շալկեց, Նարդանոս ասաց.— Քեռի, մկա ես քեզի պիտի շալկեմ։

Քեռին ասաց.— Դուն չես կանար։

Նարդանոս քեռու ծեռքեր պռնեց, թալեց շալակ, առավ մտավ տուն։ Հաց կերան, պրծան, հ'ելան քնան։

Առավոտ էղավ, Նարդանոս քեռուց շուտ հ'ելավ, քեռուն ասաց.— Արի շալկեմ, մինչև հ'ելնինք դուս, դուրսն էլ դուն ընձի շալկե։

Քեռին ասաց.— Լա՛վ։

---

1 Արթուն, զգաստ (Ծ. Բ.)։

Նարդանոս քեռին շալկեց, տանեն դուրս խանեց, ասաց.—Քեռի՛, դու քնա, ես չեմ դար։

Քեռին քնաց, Նարդանոս էկավ տուն, մորն ասաց.— Ես անոթի եմ։

Խաց կերավ, պառկավ, պայց հիշար է։ Քիչ մնաց, դև էկավ։

— Տեսա՞ր, կնիկ, քու փուճ տղեն ի՞նչ էրաց։ Ես կըսի, դու չավտիր։

Կնիկն ու դև հ'ելան տուան հ'առճևի խոր լցին։

Կնիկն ասաց.— Քու ձեռքեն ղաթան չելիր։ Քնա քսան խատ օցու քլուխ պեր։ Ես դյաթա կշինեմ, էրկու խատ իստակ է, մեկ աղուլոտ, ուտելուն ալես մեռնի։

Նարդանոս լսեց, քիչ մնաց, Նարդանոս հ'ելավ վեր։

Դև գնաց քսան խատ օցու քլոխ պերեց։ Կնիկն առավ տարավ մյուս հ'օդեն, աղեկ մի սղկեց, պերեց խմոր շաղղեց, էտ օցու քլոխ տրեց մեկ դյաթի մեջ։ Իրեք դյաթա թխեց։

Իրիկուն էղավ։ Քեռին էկավ։ Նարդանոս ուրախցավ քեռու վրա, բաշլեցին էնոնք խոսիլ, խնդալ, ախչիկ ներս մտավ։

Տղեն ասաց.— Քո՛ւրիկ, ի՞նչ ես էփեր։

Ասաց.— Ա՛խպեր, հ'եսօր իմ քյեֆ դյաթա ուզեց, իրեք խատ դյաթա եմ շիներ։

Տղեն ասաց.— Լա՛վ է, բե՛ր։

Ախչիկ պերեց, տրեց սեղանի վրա, տղեն էրաց օր դյաթեն ծեռ առներ ուտեր։ Նարդանոս ասաց.— Քեռի, քեռի, հ'առքի վրա օ՛ց կա։

Էտոնք թոխ ըշկեն հ'առիք, Նարդանոս էրկու ծեռքով դյաթեն փոխեց։

Վերճ քեռին ասաց.— Ո՞ւր է օց։

Նարդանոս ասաց.— Դուք չտեսաք, էկավ փախավ։

Ախչիկ հասկցավ ինչ էղնել։ Քեռին ու Նարդանոս դյաթի կես կերան, տարցան ախչկե վրա.— Դո՞ւն ինչի չես ուտեր։

Ասաց.— Ես դյաթա շինած ատեն էնոր խոտեն կշտացեր եմ, իշտախ[1] չունեմ։

Քեռին ու Նարդանոս ասին, հ'ու-հ'ու չէղնի՝ մեկ փրտուճ էլ չե՞ս կանար ուտել։ Օր տուն չես ուտեր, մենք էլա չենք ուտեր։

Ախչիկ տեսավ բոշ ա, իր էրած պան պիտի հայտնի էղնի, դյաթի մեկ քնարից պրտուճմ՝ կիսեց կերավ ու գետին ընգավ։

---

1 Ախորժակ (Ծ. Բ.)։

Քեռին ասաց.— Ամա՜ն իմ քուր, ամա՜ն իմ քուր, ի՞նչ էղավ։

Նարդանոս ասաց.— Քեռի՜, չիլաս։ Եթե լաս, քեզի էլ կսպանեմ։ Հանգիստ քու տեղ նստի, թող էնի շան պես սատկի, նոր ես քեզի պատմեմ։

Քեռին շիվարավ թե.— Ի՞նչ պան է,— ասաց,— պատմա սես-նիմ, ի՞նչ է։

Նարդանոս ասաց.— Քեռի, գիտե՞ս, ես դևու տղեն եմ։ Օր դու թանրահ էրեցիր ճուր, խաց ըցեր վրեն, քու քուր քեզի նադ էրաց, խաց ճուր լցեց վրեն, դև սաղցավ, ես էլ դևու տղեն եմ։ Մեկ օր էլ, օր ես քեզի ասի, ես կուգամ քու խետ, պաճառն ի՞նչ էր։ Քու քուր ասեր էր դևին՝ «Գնա՛, իմ ախպեր էս ինչ հ՚ախպրի վրեն նստուկ, զա՛ր, ըսպանա»։ Օր ես էլ էկա քու խետ, նետ անեղ առա, իմ խեր գալու պես, էրաց օր քեզի զարներ, ես զարկի, թև յարալու էրի։ Մեկ էլ քու քուրն ասաց՝ «Արի խոր փորենք, թոխ գյա ընգնի մեջ»։ Էնոնք խոր փորեցին, ես էկա քու հ՚առեճ, քեզի շալկի, պիրի տուն, խլիսուն շալկի տարա դուս։ Տեսան օր բոշ էր, լցին։ Տառցավ քու քուր դիտե՞ս ինչ ասաց՝ «Զաթան քու ծեռքից պամ՚ չելներ, քնա՛ քսան խատ օցու քլուխ պեր, շինեմ գյաթա՝ թոխ ուտա իմ ախպեր, մեռնի»։ Էտ գյաթեն օր շինեց, ես դիտի որն էր, ուտելու ժամանակ ես ձեզի ասի. օց կա հ՚առիք, պաճառ ի՞նչ էր. գյաթեն փոխելու համար էր։ Թող էտպես շներ սատկին։

Քեռին եփ օր հասկցավ էս փոլոր խոսքեր, շիվարավ, թե ինչ-պե՞ս կէղնի օր քուր մի ախպոր դուշման էղնի։ Զաթան քեռին Նարդանոս շատ կսիրեր, պայց էտ օրից սորա ավելի շատ կսիրեին մեկ մեկի։

Քուր տարան մեկ տեղ թալեցին, էկան նստան. Նարդանոս ասաց.— Էսկից վերճ ես էլ քու խետ կուքամ։

Քեռին ասաց.— Լավ կէղնի։

Մեկ ժամանակմ՚ էտպես անցուցին։

Տառնանք դևու վրա։

Քեռին նետ անեղ ծեռք առավ, խորու պերան պացեց, նետ անեղ զարկեց, դև բոռաց.— Ա՜խ, խողածին, մեկ դը՚ռբ էլ ղար։

Տղեն ասաց.— Կտրճի դրրբ մեկ ա, էբկուս չէղնիր։

Քար սրռճեցին վերեն, թողին քնացին։

Առավոտ էղավ, քնացին սար։ Եփ սարի գլուխ հ՚ելան, Նարդանոս տեսավ հեռու մեկ սարիմ՚ գլուխ ճրաք կերևա։ Ով գիտե քանի ավուր ճանապարհ է։

Նարդանոս ասաց՝ «Ես պիտի էրթամ էս կրակեն կրակ պե-

րեմ»։ Քեռին ասաց.— Ես քիչ մի քնիմ, առ նետ անեղ, ավ քալու պես՝ զա՛ր։

Քեռին քնավ. Նարդանոս առավ նետ անեղ խանեց ուր չերեն քնու ուլինք թալեց քեռու ականչ, թողուց քնաց։ Շատ քնաց, քիչ քնաց, քնաց էտ ճրաքին մոտեցավ, տեսավ օր էտ տեղ քառսուն դև պառկած, քառսուն կանթեն պղինձ, քառսուն խատ օխչար հինե լցուկ, դրուկ կրակի վրեն։

Նարդանոս էրկու ծեռքով պղինձ վերցրեց, քիչ կրակ առավ, պղինձ վրեն դրեց, թողեց քնաց։

Տարցավ ինքն իրեն ասաց՝ «Մժիկ մտավ դավլու[1] ականչ, մըտնելուց հ՚ելնելուց ի՞նչ խաբար էղավ, մկա իմն ա, քառսուն դև պառկուկ, ես քնացի դողութնով կրակ պերի, էտ էլ էղավ կտրճութունծ»։ Կրակ թափեց, քնաց մեկ ալ պերե։ Նարդանոս ծեռ թալեց պղինձ, կայիմ զարկեց գետին, կրակն առավ. վերցեց պղինձ գենա կայիմ զարկեց կրակին, օր դևեր հ՚արթին։ Դևեր հ՚արթան, տեսան օր մեկ մարթ քառսուն մարթու պղինձ կվերցա ու կտնա։ Էտոնք էլ զարմացան էտոր կտրճութենի վերա։

Դևերու մեծ կանչեց.— Կտրի՛ճ, արի ուխտ ու պայման էնենք, օր դուն էղնիս մեզի մեծ։

Նարդանոս քնաց, էղավ էտոնց մեծ։ Դևեր պատմեցին. «Էս քառսուն տարի է կուզենք թաքավորի ախչիկ պիրենք, պայց չենք կանարծ»։

Նարդանոս ասաց.— Հաց կիրեք, ու էրթանք։

Հաց կերան.— Առեք,— ըսավ,— ծեր հաչըթներ ու էրթանք։

Հ՚ելան քնացին, ասաց.— Ապա տեսնինք ինչպես կելնիք։

Նարդանոս տեսավ օր էրկաթե զամփ, էրկաթե փնչի վրա կըզարնե, սաստիկ ձեն կելնի։

Ասաց.— Վար դրեք։

Առավ ձեռքեն, ասաց.— Հիմա ձեզի կասեմ, ես փնչեր կղարնեմ հ՚ելնիմ վեր, մեկ-մեկ մարթ հ՚ելնիք։

Փնչեր զարկեց, հ՚ելավ վեր, մարթիկ մեկ-մեկ վեր հ՚ելան, քլխներ կտրեց, ականչներ իրեն ջեբ լցեց։ Տանիս ծակեց, ներս մտավ, տեսավ թաքավորի ախչիկ պառկուկ։ Շարբաթ խմեց, խնձոր կես կերավ, կես թողեց, տեսավ էն դեխեն վիշափն էկավ՝ թաքավորի ախչիկ խեթելու։ Խանեց դանակ զարկեց վիշափին, ու դա-

[1] *Ուղտի (Ս. Բ.)։*

նակին ասաց.— Քանի օր իմ ձեռքս ի քեզի չառնի, տեղետի չպըրծիս։

Տղեն հ'ելավ քնաց քեռու քով։ Ուլինք ակնջեն խանեց, քեռին հ'արթավ, ասաց.— Շատ եմ քներ, ո՞վ զիտե քանի ամիս եմ քներ։

Հ'ելան քնացին տուն։ Դավըրսի[1] օր թաքավոր դալալ էտու կանչել, ով օր էս դանակ քաշե, իմ փեսեն է։

Էտ քաղքի մեջ մարթ չմնաց։ Թաքավոր ասաց.— Էլ մարթ կա՞։

Վազիրներ ասին.— Էտ դիմաց սար ծուխ կելնի։

— Էտտեղ մարթ կա, պերե՞ր եք։

Ասին.— Չէ՛։

— Կնացե՛ք, պերեք։

Քնացին տղի հ'ետևեն։ ասին, օր հ'ելեք էրթանք թաքավոր կըկանչա։

Հ'ելան կնացին։ Թաքավոր ասաց քեռուն.

— Քաշե էս դանակ, իմ ախչիկս կուտամ քեզի։

Քեռին չկրցավ։ Թաքավոր ասաց Նարդանոսին.— Հ'ելիր դուն։

Նարդանոս հ'ելավ մեկ մատով դանակ քաշեց, ուր մեջք զարկեց։

Թաքավոր ասաց.— Իմ ախչիկս քեզի կուտամ։

Նարդանոս ասաց.— Քանի օր ընձի կուտաս, ես տվի իմ քեռուն։

Յոթն օր, յոթ գիշեր զարկին էնտեղ խաղցան։ Նարդանոս հ'ելավ քնաց։ Շատ քնաց, քիչ քնաց, տեսավ մեկ մարթ մի միճաց վերեն պառկեր։

— Պարև, մա՛րթ։ Աստված կարողութեն տա։

Էտ մարթ ասաց.— Պարով, հազար պարով, աստված կարողութեն տա Նարդանոսին, չէ թե ընձի։

Նարդանոս ասաց.— Էն օր էստեղ էղնի, կէղնի՞ս էնոր ախպեր։

Էտ աստղ խամրրող մարթ ասաց.— Չէ՛ թե ախպեր, կէղնիմ մշակ։

Նարդանոս ասաց.— Ես եմ։

Հ'ելան ու քնացին։ Շատ քացին, քիչ քացին, տեսան մեկ մարթ մի, ճաղցի քար էցկեր օտք, լապտրակ պռներ ծեռք, լապտրակ կթողնե, կվազե հ'ետևեն, կպռնե։

---

1 Հաջորդ (Ս. Բ.)։

Նարդանոս ասաց.— Պարև քեզ, մա՛րթ, աստված կարողութեն տա քեզի, ի՞նչ է կէնես։

Էտ մարթ ասաց.— Աստված կարողութեն տա Նարդանոսին, որ էսչափ քաջութեն էրաց։ Եթե ըստեղ էդներ, ես էնոր մշակ կըէղնե։

Նարդանոս ասաց.— Ես եմ։— Առավ ու գնաց։ Շատ քացին, քիչ քացին, տեսավ մեկ մարթ մի ծովի վրա կայներ, ճուր կխմե։ Խմե, չխմե, կկանչե՝ «Ամա՜ն, ես ծարվու մեռա»։

Նարդանոս կըսե.— Աստված կարողութեն տա քեզ, մա՛րթ, ի՞նչ կէնես։

Կասա.— Աստված կարողութեն տա Նարդանոսին, որ էսքան քաջութեն էրաց, ես ի՞նչ եմ էրեր։ Եթե էստեղ էդներ, ես էնոր մշակ կէղնե։

Նարդանոս կըսե.— Ես եմ։— Կառնե ու կէրթա։ Շատ կէրթան, քիչ կէրթան, մեկ քաղաք մի կէրթան։ Տեսնի որ էտ քաղաքի թաքավոր մեռեր է, խավք կթալեն՝ վիր գլխուն որ նստավ, էնի կէնին թաքավոր։

Իրեք անգամ կնստի Նարդանոսի գլխուն։ Նարդանոս ուր թաքավորութեն կուտա աստղ խամբրողին։ Յոթն որ էտտեղ ուրախութեն էնելեն վերճ, կէրթան։

Կէրթան մի քաղաք մի, տեսնի որ թաքավոր նորեն մեռեր ա, էտտեղ էլ խավք կթալեն. իրեք անգամ էլ կը նստի Նարդանոսի վրա։

Նարդանոս ուր թաքավորութեն կուտա ճաղցի քար օտք էցկողին։ Յոթն որ էտտեղ ուրախութեն էնելեն վերճ, կելնի կէրթա ուրիշ քաղաք։ Էտ քաղաքն էլ թաքավոր մեռեր ա, խավք կթալին, կնստի Նարդանոսի վրա։ Նարդանոս ուր թաքավորութեն կուտա ծով խմողին։ Յոթն որ էտտեղ մնալեն սորա, կելնի կէրթա ուրիշ քաղաք։

Նորեն էտ քաղաք թաքավոր կփոխեն, խավք կթալեն, կնստի Նարդանոսի գլխուն։ Նարդանոս էղավ թաքավոր։

Ժամանակեմ վերշ ուրիշ թաքավորներ էտոր հետ կռիվ կէնեն։ Նարդանոսի կողքի դանակ կհանեն, կթալեն ծով։ Նարդանոս մեռածի պես կմնա։

Մենք տառնանք աստղ խամբրողի վրա։ Կտեսնի որ Նարդանոսի աստղ խավար է։ Հեռագիր կուտա ծով խմողին, ճաղցի քար օտք էցկողին ու Նարդանոսի քեռուն։ Չորս մեկտեղ ճամբա կելնին։ Շատ կուքան, քիչ կուքան, Նարդանոսի քաղաք կհասնին։

Աստղ խամբրող ծով խմողին կասա.— Գնա ծով խմե, Նարդանոսի դանակ մեջեն խա՞ն, բեր։

Ծով խմող կէրթա ծով կխմե, դանակ մեջեն կխանա, կպերա Նարդանոսի միջաց տեղը կգանի։

Նարդանոս կասղնա, յոթն օր, յոթ զիշեր ուրախութեն էնելեն վերճ, մեկ մեկ ուր տեղ կէրթա։

Էնոնք կհասնին իրենց մուրազին, դուն էլ՝ քոն։